

**TONY'S**  
FRESH & CRUSTY  
**FOOD**

غير الشكل وحافظ على الفوعية  
معجنات وآكل جاهز  
اطلبها من  
السوبرماركت

Charfan Est. - St. Elle Residence - Rawda - Telefax: 961 1 683 886  
P.O.Box: 2203 Jounieh-Lebanon  
website: www.tonyfood.com - E-mail: tonysfood@tonysfood.com

# ԱԶՏԱԿ

## ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE *أزتك جريدة يومية سياسية وأدبية - الديرة المسؤولة، إيشادروويشيان*

1500 Լ.Պ. 76ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 170 (21512) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

**HORAIRE D'HIVER**  
à partir du 22 septembre 2003

Du lundi au vendredi: de 8h15 à 16h00  
Samedi: de 8h15 à 12h30

البنك اللبناني الفرنسي  
**BANQUE LIBANO-FRANÇAISE**

0179 1332  
www.lbf.com / E-mail: info@lbf.com

### ՎԱՐՉԱՊԵՏ ԶԱՐԻՐԻ ՌԻԱՏԻ ՄԷՁ ՏԵՍԱԿՑԵՑԱԲ ՖԱՐՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ԱՅԼ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԴԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկն պաշտօնական երկօրեայ այցելություն համար մեկնեցավ Մեդիտական Արաբիա, ուր հանդիպումներ ունեցավ սեփուցի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:

Վարչապետ Հարիրի Ռիատի մէջ ընդունուեցաւ պետական նախարար Մըսաալէտ Իպանի կողմէ:

Հարիրի կէսօրէ ետք ժամը 1:00ին հանդիպում մը ունեցավ պաշտպանութեան նախարար Սուլթան պըն Ապտէլպիլի հետ: Քննարկուեցան շրջանային եւ միջազգային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ լիբանանեւեանական երկկողմանի յարաբերութիւնները:


Հանդիպումէն ետք Ապտէլպիլի յայտնեց, որ Լիբանան յատուկ հոգածութեան առարկայ է Ռիատի համար եւ մեր յարաբերութիւնները Լիբանանի հետ կը մնան բարձր մակարդակի վրայ, ինչպէս անցեալին նաեւ այսօր:

Ապա յետմիջօրէի ժամը 3:30ին վարչապետ Հարիրի ընդունուեցաւ Մեդիտական Արաբիոյ Ֆահտ պըն Ապտէլպիլի թագաւորին կողմէ: Հանդիպումին քննարկուածի առարկայ դարձան Պէյրութ - Ռիատ երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ պաղեստինեւիստայեան ու իրաքեան տագնապներուն արձանագրած նորագոյն վարձագումները:

Վարչապետ Հարիրի ժամը 4:30ին հանդիպում մը ունեցավ նաեւ Մեդիտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա պըն Ապտէլպիլի հետ, որուն հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները եւ շրջանային իրադարձութիւնները:

Վարչապետ Հարիրի Ռիատէն պիտի մեկնի Փարիզ: Իսկ նախապէս ծրագրուած վարչապետին Իտալիա կատարելիք պաշտօնական այցելութիւնը յետաձգուեցաւ:


### ԶԱՌԱՋԻՐԻ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ՓԱՔԻՍԱՆՑԻՆԵՐՈՒՆ. «ՄՈՒՇԱՐՐԱՅԸ ՏԱՊԱԼԵՑԻՔ»



Երէկ, պատկերասփիւռի «Արապիա» կայանը պիտեց նոր վիտէօ երիւ մը, որուն մէջ Ուսամա Պըն Լատէնի աջ բազուկը՝ Այման Չաուսհիրի կոչ կ'ուղղէ Փաքիստանի ժողովուրդին՝ տապալել նախագահ Փերվէզ Մուշարրաֆը, պալն նկատելով ամերիկացիներուն «գործիքը», որ «պատճառ եղաւ Աֆղանիստանի մէջ հազարաւոր անմեղ իսլամներու մահուան»:

### ԱՍԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԲԱՆԻ ՄԸ ԱՄԻՍԷՆ ՊԷՏԲ Է ԲԱՇՈՒՆ ԻՐԱԲԷՆ

«Ամերիկեան ուժերը քանի մը ամիսէն, առաւելագոյնը՝ 8, պէտք է քաշուին Իրաքէն», յայտարարեց երէկ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմինիք Տը Վիլիէն, որ կը պահանջէր ՄԱԿէն՝ Իրաքի գծով յատուկ «յայտ ազիր» մը մշակելէ:



### ՔԼՄՓ ՏԵՅՎԻՏԻ ՄԷՁ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՅԱԺՈՂՈՎԻՆ

### ՊՈՒՇ ԵՒ ՓՈՒԹԻՆ ԿԵԴՐՈՆԱՑԱԾ ԵՆ ԻՐԱՆԻ ԵՒ ՇԻՄՍԱՅԻՆ ԶՈՐԷԱՅԻ ԹՂԹԱԵՐԱՐՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ

Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ նախագահներ ճորձ Պուշ եւ Վլատիմիր Փութին Շաքաթ օր շնջում են, որ Թեհրան պէտք է գործակցի Կորիզային Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան հետ:



Մտնը կը խօսէին Քէմփ Տէյվիտի մէջ կայացած երկօրեայ վեհաժողովի մը աւարտին: Մտնը ընթացքին տիրական եղած են Իրանի եւ Հիւսիսային Քորէայի առնչուող կորիզային կէսքերու կապուած մտահոգութիւնները, ինչպէս նաեւ Իրաքի մէջ միջազգային օժանդակութիւն ապահովելու ամերիկեան ճիգերը:

Վեհաժողովին աւարտին շատ աւելի յստակ դարձած է, թէ երկու ղեկավարներուն միջեւ յարաբերութիւնները հետպիտէ աւելի ամուր կը դառնան, հակառակ գոյություն ունեցող տարակարծութիւններուն:

Պութին, Պուշի հետ միացեալ մամլոյ ասուլիսի մը ընթացքին, ըսած է, թէ Ռուսիա որեւէ ծրագիր չունի հաւաքական քանդուածի կէսքերու ստեղծումին մասնակցի դառնալու՝ Իրանի կամ աշխարհի որեւէ այլ վայրի մէջ: Իրանի արտաքին գործոց նախարարութեան քանքերը երէկ յայտնեց, որ Թեհրան որեւէ պիտի չկատարէ կորիզային արհեստագիտութիւն ձեռք ձգելու կամ իրանիումի հարստացման աշխատանքներ տանելու իր իրաւունքներուն առնչութեամբ:

Համիտ Ռիպա Ասեֆի Թեհրանի մէջ անգամ մը եւս հաստատած է, թէ իր երկիրը հաւաքական քանդումի կէսքեր չի մշակեր եւ թէ «մեր գործունէութիւնը թափանցիկ է»:

### ՖԱԹՉԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՏԻՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՆ ՆՈՐ ԿԱԶՄՈՒԱԾ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Պաղեստինցի վարչապետ Սիմէտ Քորէյ իր պաշտօնին գործնապէս ստանձնումին դէմ ցցուող խոչընդոտ մը հարթեց շաքաթակերջին՝ խորհրդարանին քուէարկութեան առաջ կառավարական իր կազմին հանդէպ Ֆաթիի հաւանութիւնը ապահովելով:

Ֆաթիի կեդրոնական կոմիտէն Շաքաթ օր ընդունած էր Քորէյի 24 անուններ ընդգրկող կառավարութեան ցանկը: Անոնցմէ շատեր նոր դէմքեր են: Ապահովութեան պատասխանատուի եւ ներքին գործոց նախարարի քանալի պաշտօնները տրուած են Նասէր Եուսուֆի, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի մէկ սերտ գործակիցը եւ Ֆաթիի երկարամեայ մէկ անդամն է:

Արաֆաթի սերտ խորհրդականներէն Նապիլ Ապու Ռուտէյնա թղթակցներուն յայտնած է, որ կառավարութեան կազմին ցանկը պաղեստինեան օրէնսդիր խորհուրդին կողմէ քուէարկութեան կրնայ դրուիլ Հինգ-շաքթի օր իսկ:

Ան աւելցուցած է, որ Քորէյ տակաւին չէ աւարտած կառավարութեան կազմութիւնը եւ թէ կան քանի մը նուազ կարեւոր նախարարութեանց պաշտօններ, որոնց գծով նշանակումներ չեն կատարուած:

Կ'ակնկալուի, որ Արաֆաթ նոր կառավարութեան յաւելալ իրաւասութիւններ տալ բաղդատած նախկին վարչապետ Մահմուտ Ապպասի, որ իրաժարած էր ապահովութեան հարցերու հակակշիռին գծով տարակարծութիւններու պատճառով:

Նոր կառավարութեան 24 պաշտօններուն 12 նոր դէմքեր պիտի ստանան: Անոնցմէ 15ը Ֆաթիի մաս կը կազմեն:

Սակայն շուրջ 1000 անձեր, որոնց կարգին ապահովութեան մարտի պաշտօնատարներ, Շաքաթ օր կապա քաղաքին մէջ ցոյց մը կատարած են ինպատակ ապահովութեան հարցերու նախկին պատասխանատու Մահմուտ Տահլանի, որ կառավարական նոր կազմին դուրս ձգուած է:

Անոնք դատապարտած են Ֆաթիի զիջարարութեամբ կառավարութիւնը եւ զօրակցութիւն յայտնած՝ Տահլանի, ինչպէս նաեւ առաջին անգամ ըլլալով այրած են շարժումին երկու պաշտօնատարներու՝ Հանի Հասանի եւ Ապպաս Չաքիի նկարները:

Արաֆաթի խորհրդական Սաէպ Ուրալթաթ կը վերստանան Իսրայէլի հետ քանակցութիւնները զիջարարելու պաշտօնը, մինչ արտաքին գործոց նախարար Նապիլ Շաքաթ եւ Ելեւմուտքի նախարար Սալամ Ֆայստ իրենց պաշտօնները կը պահեն:

Քորէյ ինտսուցած է «պազային միասնականութիւնը պահպանել» եւ Միջին Արեւելքի խաղաղութեան առնչութեամբ «յանձնառութիւնները» գործադրել:

Այսուհանդերձ, Իսրայէլի հետ երկկողմանի պինդուլի կոչ ուղղելով, Քորէյ արդէն իսկ բախում ունեցած է Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի հետ: Իսրայէլ կը մերժէ զօրավիզ կանգնիլ Քորէյի կամ ընդունիլ պինդուլ մը մինչեւ որ անիկա վերջ չտայ պաղեստինեան պինդուլ խմբակներու գործունէութեան:

ԹԻՐԱՅԵՆԵԱՆ քանակը երէկ ներխուժած է Այսրյորդանանի ձենին քաղաքը, ուր կրակմարի դրութիւն հաստատուած է: Անիկա Շաքաթ գիշեր 8 պաղեստինցի ձերբակալած է՝ հակաիսրայէլեան յարակումներ կատարած ըլլալու յանցանքով:

### ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Կ'ԱՐԾԱՐԾԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐՈՒ ԱՆԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ

Հ. Յ. Գ. Բիրոյի անդամ, Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ ընկ. Վահան Յովհաննիսեան Շաքաթ օր հիւրն էր հայրենի «Ազգակ» ակումբին, ուր հրատարակուած էր ներկայացուցելու իր տեսակետները՝ «Պետական պաշտպանութիւնը իբրեւ հասարակական հարց» նիւթին շուրջ: Ձրոյցը յատկապէս ընթացած է Հայաստանի մէջ մեծ տարածում գտած թիկնապահներու երեւոյթին շուրջ:

Վահան Յովհաննիսեան կարելոք նկատեց հարցը օրէնսդրական ձեւերով լուծելու հանգամանքը: Թէեւ Հայաստանի նախորդ խորհրդարանը ընդունած էր «Պետական պաշտպանութեան ենթակայ պաշտօնատարներու մասին» օրէնքի նախագիծ մը, այսուհանդերձ այդ ուղղութեամբ տակաւին մեծ աշխատանք կայ տանելիք:

Անդրադառնալով վերոնշեալ օրէնքին, Յովհաննիսեան նշեց, որ պետական օրէն պաշտպանուելու, այսինքն՝ թիկնապահ ունենալու իրաւունք ունին Հայաստանի նախագահը, Ազգային Ժողովի նախագահը, վարչապետը, Սահմանադրական Դատարանի նախագահը, այսուհանդերձ երկրին նախագահը իրաւունք ունի որոշ անձերու յատուկ թոյլտուութիւն տալ թիկնապահ ունենալու:

Սակայն խնդիրը այն է, որ վերոնշեալ պաշտօնատարներէն անկախ այսօր թիկնապահներու «շքախումբով» կը շրջապային այնպիսի անձեր, որոնց թիկնապահներու խմբակը յատուկ քանակի կը նմանի, դիտել տուաւ Յովհաննիսեան եւ նշեց. «Հոս է, որ կը յառաջանայ հասարակական ընդվզում եւ շատեր պզուտ կ'ունենան, երբ կը տեսնեն, թէ ինչպէս շքեղ «ճիւղ»երու շարաններ կ'անցնին փողոցէն: Անիկա պարզապէս անտանելի է, եւ բնական է, որ մեր ժողովուրդին մօտ ընդվզում կը յառաջացնէ»: Ան այս առումով առաջարկեց որեւէ գրել յատուկ օրէնք, որ կը սահմանէ թիկնապահի կարգավիճակը: Պատասխանելով նկատողութեան մը, թէ երբեմն պետական պաշտօնատարներու թիկնապահներ բախում կ'ունենան քաղաքացիներու հետ, Վահան Յովհաննիսեան նկատել տուաւ, որ թիկնապահներ երբեմն կը կարծեն, որ եթէ իշխանութեան ներկայացուցիչ մը թիկնապահն են, ապա իրենք եւս իշխանութիւն են...

### ԳԱՅՐԵՆԻ «ՕՐ» ԹԵՐԹԻ ՏՆՕՐԵՆՆ ՈՒ ԽՄԲԱԳԻՐԸ ՅԱՐՉԱԿՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄԸ ԵՆ

Ուրբաթ, 26 Սեպտեմբերին, ուշ գիշերով աշխատանքէն տուն վերադարձի ճամբուն վրայ յարձակման ենթարկուած են հայրենի «Օր» թերթի գլխաւոր խմբագիր Գայիանէ Մուրոյեան եւ թերթի տնօրէն Ռաֆիկ Յովակիմեան, չորս անձանքներու կողմէ:

«Նիվա» տիպի ինքնաշարժ մը, առանց թիւի, կտրած է Յովակիմեանի ինքնաշարժին ճամբան եւ «Նիվա»էն դուրս եկած են դիմակաւոր չորս անձերը որոնք ներկայանալով իբրեւ ոստիկաններ՝ յարձակած են Յովակիմեանի եւ Մուրոյեանի վրայ: Մինչ այս վերջինը բռնաբարեց հեռախօսով կը փորձէր կապուիլ ոստիկանութեան, անձանքները խլած են հեռախօսը եւ ուժգին հարուածներ հասցուցած՝ անոր գլխուն, ապա հեռացած են: Մուրոյեան փոխադրուած է հիւանդանոց: Դէպքին շուրջ բացուած է քննութիւն:

«Օր» թերթը վերջին շրջանին հետեւողականօրէն կ'անդրադառնար տնտեսական հարցերու եւ պետական բարձրաստիճան պաշտօնատարներու գործունէութեան:

### ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԿԸ ՂԱՏԱՊԱՐՏԷ

Հ. Յ. Գ. Բիրոյի անդամ, Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ ընկ. Վահան Յովհաննիսեան խստի դատապարտեց «Օր» թերթի տնօրէնին եւ խմբագիրին դէմ յարձակումը, յայտնելով, թէ երեւոյթը ուղղակի խայտառկութիւն է: Ան յայտնեց, թէ ոստիկանութիւնը պարտաւոր է յայտնաբերել յանցագործները:

ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԻ ՄԸ ԸՆԹԱՑՔԻՆ

2004ԻՆ ՅԱԲԵԼԵԱԼ ՏՈՒՐՔԵՐ ՉԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՄԻՆԻՈՐԱ

Ելեմուտքի նախարար Ֆուատ Սինիրա երկնախարարության կեդրոնատեղիին մեջ տուալ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին ակնարկեց 2004ի պետական պիտանքի նախագիծին, ըսելով, որ անկախ ոչ մէկ յաւելեալ տուրք կ'ընդգրկէ կամ կը պարտադրէ քաղաքացիներուն եւ ոչ իսկ գոյութիւն ունեցող տուրքերը վերատեսութեան կ'ենթարկէ, նկատի ունենալով երկրին տնտեսական ներկայ իրավիճակը:

Իր յայտարարութիւններուն ընթացքին հարցումի մը պատասխանելով Սինիրա ըսաւ, թէ պետական պիտանքի բացը կը տարուբերի 27,7էն 30,8 առ հարիւրի միջեւ:

Ան աւելցուց, որ նշեալ բացին պատճառը երկրին ներածուանները չեն այլ պետութեան ծախսերը, որոնք կը բաժնուին հիմնական երկու մարկերու. առաջինը՝ ելեկտրականութեան մարկի յատկացում գումարները՝ վառելանիւթի գնման համար. երկրորդը՝ ընդհանուր պարտքերուն վրայ յաւելուած այլ գումարները:

Սինիրա աւելցուց նաեւ, որ 2004ի պետական

պիտանքի նախագիծը բարեկարգման կէտեր չի ներառներ, որովհետեւ քաղաքական պայմանները առիթ չեն ընծայեր անոնց գործադրութեան եւ կայունութեան:

Սինիրա շեշտեց, որ 2004ի պետական պիտանքի նախագիծը կը վատորոշուի 2003ի նախագիծէն այն իմաստով, որ միտումներու գումարը՝ 4950 միլիառ լ. ոսկի, կ'անշատուի երկրին ընդհանուր պարտքէն:

ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

Այսու կը յայտնենք, թէ Մարաշի հայրենակցական միութեան վարչութիւնը սկսած է ընդունելու ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ 2003/2004 տարեշրջանի կրթնապատի դիմումները: Կը խնդրուի ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԵՆ՝ անձամբ ներկայանալ վարչութեան գրասենեակը ամէն երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 3:00էն 6:00: Ընդունման վերջին պայմանաժամն է 14 Նոյեմբեր 2003, որմէ ետք ներկայացած դիմումները պիտի մերժուին:

ԼԻՔԱՆԱԽ ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

365 ՕՐԵՐԸՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան 2 օրուան ձաշի ծախսը՝ 600 տուարով: Տէր եւ տիկին Ռոպեր եւ ճէթի Մանսուրեան՝ տիկնոջը եւ բոջը Ալիս Մանսուրեան-Պարսունի յիշատակին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻԱՌՈՐ

Համազգայինի Հայկի հայագիտական դասընթացի արձանագրութիւնները կը սկսին 29 Սեպտեմբեր 2003ին, ստորեւ յիշուած դասընթացի օրերուն, երկուշաբթի ժամը 5:00էն 8:00: Բառաձայն ծրագիր, շաբաթական չորս օրերով՝ երկուշաբթի, երեքշաբթի, Կինգաբաթի եւ Ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 4:00էն 8:00, Բ. Եփփէ Ազգ. ձեռնարանէ մեր: Կը դասաւանդուին՝ հայոց լեզու, գրականութիւն, պատմութիւն, բանասիրութիւն, հոգեբանութիւն, մանկավարժութիւն եւ այլն: Հաստատուած է նաեւ խտացուած ծրագիր մը, շաբթը երկու օր՝ երկուշաբթի եւ Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10:00էն 12:00, Ա. Մ. ժողովրդային Տան «Լեւոն Ծանօ» սրահէն մեր: Չորս բաժիններու դասաւանդութիւնները կը սկսին 6 Նոյեմբեր 2003ին: Հաստատուած է նաեւ ազատ ունկնդիրի դրութիւն: Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 4603205 կէսօրէ առաջ ժամը 10:00էն 1:00: 4643363 կէսօրէ ետք ժամը 5:00էն 8:00

ԼԱԻԱԳՈՅՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԸ ՀԱՄԱՐ... ԼԱԻԱԳՈՅՆ ԺԱՄԲԱՆ

POLYGLOT TECHNICAL COLLEGE

ՄԱՍՆԱԳԻՏԱՑԱԾ ԱԾԽԱՐՀԻՆ ՄԸՋ. ԸՆՏՐԵ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՆ ՄԸ

- B. T. BUSINESS STUDIES • COMPUTER • EXECUTIVE SECRETARY • TEACHING DIPLOMA • INTERIOR DESIGN • GENERAL DECOR • CHIEF ACCOUNTANT • JEWELLERY MOLDING • COMPUTER TECHNICIAN • TICKETING & TOURISM • COMPUTER LANGUAGES • ENGLISH & OTHER LANGUAGES • MARKETING • MANAGEMENT • BANKING • NURSING

LEARN ENGLISH, EXECUTIVE SECRETARY, BUSINESS STUDIES, «ՄՈՍԻ ԵՈՒԹ» ԵՆ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՎԱՐԱՐԱՐՄԵՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՆՈՒՄԸ, ԵՂԻՐ 21-ՐԴ ԴԱՐՈՒ ՄԱՍՆԱԳԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՎԱՐՄԵՆ, ՌԵՍՈՒՐՏԻՆ ԲՈՒՆԴ ԳՈՐԾԱՏԵՐԵՐՈՒՆ

ԼԻՔԱՆԱԽ ՀԱՅ ՎԱՍՏԱԿԱՌՈՐ ԱՐՈՒԵՏՏԱԳԵՏ – ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵԹԵԱՆԻ ՄԱՐՄԻՆԸ ՅԱՆՉՆՈՒԵՑԱԻ ՀՈՂԻՆ



Երէկ, յետմիջօրէի ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ յուղարկութեան արարողութիւնը իրանահայ վաստակաւոր արուեստագետ լուսանկարիչ Վարուժան Սէթեանի, որ մահացած էր նախանցեալ օր:

Յուղարկութեան արարողութեան նախագահեց եւ դամբանական արտասանեց Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան: Ներկայ էին հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լախուտի ներկայացուցիչ՝ նախագահական պատի տեղեկատուա-

կան խորհրդատու Ռաֆիք Շլեյա, որ վերաբերեալ արձանագրութիւններ, ազգային պետի շքանշանով լեւառու պարգեւատրեց իրանահայ վաստակաւոր լուսանկարիչը:

ՉԵՀԻ ՈՒՎՀՊԻ «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ

Պատկերասփիւռի «Սուքաբայալ» կայանի խօսքով եւ յայտագիրներու խմբագիր ՉԵՀԻ ՈՒՎՀՊԻ Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին կը պատասխանէ ՀԱԼԱ ՀԱՏՏԱՏԻ հարցումներուն:

ՀԱՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 83ԱՄԵԱԿ ՄԱՍԱՂԻ ԱՒԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՆ

Համոյ հերոսամարտի նահատակներուն նուիրած աւանդական մատաղի պատրուսութիւնը տեղի պիտի ունենայ Ծաբաթ, 18 Նոյեմբեր 2003ին: Ետեւաբար՝ կոչ կ'ուղղենք բոլոր հայրենակիցներուն, որ իրենց նիւթական, մատաղցու ոչխար կամ նուիրատուութիւնները փոխանցեն Ս. Գեորգ եկեղեցոյ խորհրդատուին (ցերեկը) եւ շրջող հանգանակիչներուն: ՀԱՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քոլէճի մէջ հաստատուած Պուրճ Համուտի Առաջին Հանրային Գրադարանը ամառնային կարճ արձակուրդէ մը ետք կը վերաբացայ իր դռները 1 Նոյեմբեր 2003էն սկսեալ, երկուշաբթիէն Ուրբաթ, առաւօտեան ժամը 10:00էն 6:00, իսկ Ծաբաթ օրերը ժամը 9:00էն 1:00: Չամազան նիւթերով հարուստ, բազմալեզու հրատարակութիւններով եւ 17,000 գիրք, տարբեր օրաթերքեր ու պարբերաթերքեր պարունակող Գրադարանը բաց է բոլոր տարիքի եւ հետաքրքրութիւններու տեր ընթերցատեղիներուն դիմաց: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի) Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի 2003-2004 տարեշրջանի հին թէ նոր ուսանողներու արձանագրութիւնները կը շարունակուին առաւօտեան ժամը 10:00էն 1:00, Ծաղկաձորի Սելաքթոն եւ Հայկ Արսլանեան ձեռնարանի մեր գրասենեակներէն մեր: Ետաքրքրուողները կրնան անձամբ դիմել գրասենեակ, եւ կամ կապուիլ՝ Ետնաձայն՝ 04-712603 04-712604 03-429685 Fax: 04-712601 E-mail: djemaran@inco.com.lb Սուտքի ընդունելիները՝ 1-3 Նոյեմբեր 2003ին: Վերամուտ՝ 6 Նոյեմբեր 2003ին: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ՄԱՀԱՉԴ

Հ. Յ. Դ. Նիկոլ Աղբալեան Կոմիտէն կը գումծէ իր շրջանի վաստակաւոր ընկերներէն՝

ՅԱԿՈՒ ՍԻՍԼԵԱՆԻ

ՄԱՀԱՉԴ

Համոյ Գոյամարտ Միութիւնը կը գումծէ իր հիմնադիր անդամներէն՝

ՅԱԿՈՒ ՍԻՍԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ծաբաթ, 27 Սեպտեմբեր 2003ին:

ՄԱՀԱՉԴ

Ժիւնիէի Ս. Յարութիւն եկեղեցոյ թաղականութիւնը կը գումծէ իր կապի նախկին ատենապետին եւ երկար տարիներու անդամին՝

ՅԱԿՈՒ ՍԻՍԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ծաբաթ, 27 Սեպտեմբեր 2003ին:

ՄԱՀԱՉԴ

- Տիկին Վերոնիկա Սիւլեան Օրիորդ Սոնիա Սիւլեան Տէր եւ տիկին Հենրի Սիւլեան Տէր եւ տիկին Րաֆֆի Սիւլեան եւ զաւակունք Տիկին Երանուհի Չոլաքեան եւ զաւակունք Սիւլեան ընտանիք (Ուրուկուէյ եւ Նիւ Եորք) Օրիորդ Արաքի Գիւրջեան Տիար Բարսեղ Սիւլեան եւ ընտանիք Եանրբեան ընտանիք Ստեփանեան ընտանիք Թէրզեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գումծեն իրենց ամուսնոյն, հօր, հօրեղբոր, մեծ հօր եւ հարազատին՝

ՅԱԿՈՒ ՍԻՍԼԵԱՆԻ (Ծնեալ՝ 1922ին)

մահը, որ պատահեցաւ Ծաբաթ, 27 Սեպտեմբեր 2003ին, երկուշաբթի ժամը 6:00ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Ցուղարկութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ երկուշաբթի, 29 Սեպտեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը: Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին վաւիկին՝ Րաֆֆի Սիւլեանի բնակարանը՝ Քըրնէթ Շըրուան – Պայատա, 10րդ թաղ, թիւ 16 շէնք, Յրդ յարկ, երկուշաբթի 29, երեքշաբթի 30 Սեպտեմբերին եւ Չորեքշաբթի 1 Նոյեմբերին: Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Ազգային վարժարաններու սաներու ֆոնտին կամ Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանին:

2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ՏԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԸ՝ ԲՈՒՈՐ ՆԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՔԳԱՐԵԱՆ, ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ, ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ, ՍՈՒՐԸՆ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ, ՌՈՒԲԻՆԵԱՆ ԵՒ «ՅԱՌԱՉ» ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉՆԵՐՈՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ԱՆՎՃԱՐ

# ՎԱՐՈՒԺԱՆ՝ ԼՈՅՍԻ ՈՒ ՇՈՒՔԻ ՄԵԾ ՎԱՐՊԵՏԸ

Լիբանանահայությունը արդարօրէն շահած է աշխատասիրութեան, քարէն հաց հանող եւ արեւտագէտ վաճակներ ունեցող վարկը, որ ընդհանրապէս այս գաղութին եւ մասնաւորաբար ամբողջ հայ ժողովուրդին պատուաբեր անուանում մըն է:

Հայկական Յեղասպանութենէն ետք հայ գաղթականներ հասան Սուրիա եւ Լիբանան եւ արժանացան արաբ ժողովուրդին հիւրընկալութեան եւ ասպնջականութեան ու ի պատի իրենց երբեք մտահան չըրին, որ իրենք մահւան ձիրաններէն փրկուելով հասած էին եւ պարտաւոր էին Լիբանան հայրենիքին հիւրընկալութիւնը հատուցել: Եւ պահեցին իրենց խոստումը:

Խոստումը կատարող պէտք էր եւ տես այդ արժանաւորներուն մէջ առաջնակարգ դիրք գրանցող արուեստագէտ լուսանկարիչ, լոյսի եւ շուքի մեծ վարպետ Վարուժան Մէթեանը, որ Ուրբաթ, 26 Սեպտեմբերին առաջին անգամ այս անցաւոր աշխարհէն՝ լիացած ու յագեցած մեծ մարդու վայել աւանդ մը ձգելով իր ետին:

Խօսիլ Վարուժան Մէթեան արուեստագէտին մասին կը նշանակէ միւրճուիլ Լիբանանի աւելի քան 50 տարիներու արուեստի, քաղաքական, ընկերային, մշակութային պատմութեան մէջ, ուրկէ Վարուժանին ուսանակելի շնորհիւ անմահացած լիբանանցի դէմքեր կը տողանցեն եւ երախտապարտութիւն կը յայտնեն այս արուեստագէտին, որ վիրենք անմահացուց եւ պատմութեան ձգեց իրենց անհատականութիւնը ցոյց տուող լուսանկար մը՝ արուեստի գործ մը:

Վարուժանի լուսանկարչական գործիքին առջեւ հանգչած անձնաւորութիւններէն շարքը կարելի չէ թուել ամբողջութեամբ: Նաեւ կարելի չէ չիշել Սայիտ Աբըրը, Միխայիլ Նապիմէն, Սաէպ Մալամը, Քամալ Ժոնպաթը, Քամիլ Ծամունը, Յէյրուզը, Ժորժ Սարգիսեանը, Սա-

պահը, Սիմոն Վրացեանը, Ռաշիտ Քարամէն, Կարօ Սասունին, Մուշեղ Իշխանը, Ալֆրէտ Նաքքաշը, Նատիա Թուէյնին, Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասադը եւ այժմու նախագահը՝ Պաշտար Ասատ, Յակոբ Օշականը, Տիրան Աճէմեանը, Սարուժանը եւ բազմաթիւ ուրիշներ, որոնք պահ մը նստեցան Վարուժան Մէթեանի լուսանկարչական գործիքին դիմաց եւ ասպ հեռացան՝ պատմութեան մէջ լուսաւոր եւ անկրկնելի լուսանկար մը ունենալու անխառն գոհունակութեամբ:

Վարուժան նաեւ պատմութեան ծառանգ ձգեց Լիբանանի բնութիւնը գովերգող լուսանկարներու եզակի հաւաքածոյ մը, որ ցուցանիչ է այս արուեստագէտին տածած սիրոյն հանդէպ փիւնիկեան այս երկրին:

Վարուժան Մէթեան մեծ արուեստագէտը նաեւ չէր կրնար ակնաչ չտալ Հայաստան հայրենիքի կանչին եւ քաղաքականութեան: Հոն՝ հարպատ արձաններուն հետ շփուելով՝ Վարուժան լուսանկարեց հայրենի գագաթներ եւ Հայաստանի վերընձիւղուած կեանքը: Իր ամբողջ էությունը դրաւ իր լուսանկարներուն մէջ եւ վրէժը լուծեց Հայկական Յեղասպանութեան պահերուն՝ կեանքով յորդող հայրենիքէն դրուագներ արուեստի գործերու վերածելով: Դիտեցէք Վարուժանի Սարդարապատի պանդոկը եւ պիտի զգաք Մեր մեծ յաղթանակին ամբողջ իմաստը եւ վեհութիւնը:

Տակաւին շատ քան ունիւք ըսելիք Վարուժանին մասին: Սակայն եկէք այսօր խոնարհիւք մեծերու փառանքին այս արժանաւոր ներկայացուցչին յիշատակին առջեւ եւ ամէն անգամ որ Վարուժանի լուսանկարներէն մէկը դիտենք, վերջիւնք, որ մեծերը անմահ են իրենց գործով: Վարուժանն ալ անմահ է իր սքանչելի լուսանկարներով:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

## 67 ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐ ՏՈՒԻՆ ԻՐԵՆՑ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՈՍՏՈՒՄԸ

Երէկ առաւօտեան ժամը 10:00ին, Հ. Յ. Դ. «Սարդարապատ» ակումբին մէջ, Հ. Յ. Լիբանանի պատանեկան միութիւններու անդամներ տուին իրենց պատանեկան խոստումը: Խոստման այս արարողութիւնը կը կազմակերպէր Հ. Յ. Դ. Լիբանանի պատանեկան միութիւններու հիմնադրութեան 80ամեակին, այդ պատճառով ալ խոստում տուող սերունդը մկրտուեցաւ «80ամեակի սերունդ» անունով:

Օրուան կնքահայրն էր երէց սերունդի անդամներէն ընկ. Յովհաննէս Քէլէշեան, որ իր խօսքը ուղղելով պատանիներուն նշեց, որ դաշնակցական պատանիի խոստումը տալով անոնք իրենց ուխտը կը կատարեն հայրենանուէր աւելի մեծ աշխատանքի մը համար, որուն ղեկավարութիւնը պիտի ստանանք հետագային:

Ընկ. Յ. Քէլէշեան յայտնեց, որ այս ճամբան այդքան ալ դիւրին պիտի չըլլայ, որովհետեւ շատ մեծ պոտոնոթիւններ կ'ենթադրէ դաշնակցական անհատէն: Օրուան կնքահայրը նաեւ շեշտը դրաւ Հ. Յ. Դաշնակցութեան հետապնդած ազգային գաղափարախօսութեան վրայ՝ աւելցնելով, որ խոստման այս արարողութիւնը ապտակ մըն է բոլոր անոնց, որոնք կ'անտեսեն եւ կ'արհամարհեն Հ. Յ. Դաշնակցութեան ազգային էությունը:

Ապա, ընկ. Յովհաննէս Քէլէշեան իրաւիւրեց ներկայ պատանիները տալու իրենց դաշնակցականի խոստումը: Հ. Յ. Դ. Լիբանանի բոլոր պատանեկան միութիւններէն 13էն 16 տարեկան 67 պատանիներ եւ պարմանուհիներ տուին իրենց պատանեկան խոստումը: Արարողութիւնը վերջ գտաւ «Մշակ բանուոր» քայլերգով:

السفير | النجم | الزمان | المستقبل | الاخبار

1404

ԻՆՏ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Մ ար ո ն ի ն եր ու Սֆէյր պատրիարքին հովուապետական այցելութիւնը դէպի երոպական 7 երկիրներ եւ Փարիզի Էլիպէ պալատին մէջ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հետ հանդիպումը, Վոր. Միշել Աուի դատավարութեան թուականի ճշդումը եւ Պէյրութի մէջ նոր փարոսի բացումը կը հանդիսանան լիբանանեան կեանքին վերաբերող հիմնական իւրօրեր, որոնք գրաւած են 27 Սեպտեմբերի օրաթերթերուն առաջին էջերը:

Պ ա ղ է ս տ ի ն է ա ն տագնապն ու իրաքեան իրադարձութիւնները, ինչպէս նաեւ ՄԱԿի 58րդ ընդհանուր ժողովն ու անոր ընթացքին վաստակները ներկայիս ներկայացուցիչներուն ունեցած էլոյթները եւ որեւէ զեպարտեմէնտները կը շարունակեն մնալ լիբանանեան օրաթերթերուն միջազգային եւ շրջանային իրադարձութիւններուն հիմնական լուրերը:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԱՆՔ. ՍՖԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

«Սաֆիր» օրաթերթը գրած է, թէ Սֆէյր պատրիարք իր այցելութիւնը սկսաւ Փարիզի մէջ նախագահ Ժաք Շիրաքի հետ տեսակցելով: Ան նախագահին հետ քննարկեց Լիբանանի մէջ սուրիական ներկայութեան հարցն ու իշխամատուներուն հետ ուղղակի կապ հաստատելու, նշած է թերթը:

Ըստ «Տիար»ի Հարիրի Պէյրութի նոր փարոսի բացումը կատարելով յայտարարեց, որ համագումարներու պալատը պիտի կառուցուի անկէ քանի մը քիլոմէթր հեռու: Սֆէյր պատրիարք տեսակցեցաւ Ժաք Շիրաքի հետ, որ ըսաւ, թէ Ֆրանսա միշտ նեցուկ է Լիբանանի. Վոր. Միշել Աուի դատավարու-

թեան «իրաւիութեամբ» կառավարութեան կշիռը նուազեցնելու իր փորձերուն համար, իսկ Հրեպալայ կը բողոքէ ամերիկացի դեսպանին դէմ, դիտել տալով, որ ան միջամուխ կ'ըլլայ լիբանանեան ներքին հարցերուն, գրած է «Տիար»:

«Նահար» նշած է, թէ սուրիական ներկայութեան հարցը քննարկուեցաւ Սֆէյրի եւ Շիրաքի կողմէ, որ յայտարարեց, թէ Ֆրանսա լիբանանցիներուն կ'օժանդակէ: Թերթին համաձայն, Ժոնպաթ իր ընդվուտումը յայտնելով Սալաւիի ըսաւ, որ կը բաւարարուինք «Մատինա» դրամատան պատճառով անսանձով:

«Մուսաբապալ» դիտել տուած է, թէ Ֆրանսայի մէջ Սֆէյր պատրիարք արժանացաւ նախագահական ընդունելութեան եւ խորհրդածոյցով մակարդակի քննարկումներ կատարեց նախագահ Շիրաքի հետ: Հանդիպումին ւարտին ան յայտնեց, որ Լիբանան պէտք է գործադրէ «Փարիզ-2»ի պայմանները, նախքան «Փարիզ-3»ի ձեռնարկելը, գրած է թերթը:

Ըստ «Անուար»ի, Ժոնպաթ կը բորբոքեցնէ «Մատինա» դրամատան հարցը եւ կը յայտնէ, որ անիկա կը հասնի քաղաքական կարգուղ գործիչներու:

Հրեպալայ դիտել կու տայ, թէ ամերիկացի դեսպանը իրաւունք չունի դրամատուներուն հետ ուղղակի կապ հաստատելու, նշած է թերթը:

### ԻՐԱԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԵՐ

«Քիֆահ Արապի» նշած է, թէ Պաղտատի մէջ ամերիկացի պիւտրիններուն եւ Սաւրրի անդամներուն միջեւ եղած բախումը

**ՍԱԼԲԻ ԿԻԼԻԻՉԵԱՆ ԸՆԴ ՏՈՔԹ. ԳԵՈՐԳ ՍԵՄԵՐՃԵԱՆ**

Նշանուած  
Շաբաթ,  
27 Սեպտեմբեր 2003

կը խանգարէ Հաշիմի լուղարկաւորութիւնը: Ըստ թերթին, Փաուրլ Ֆրանսական պահանջներուն տեղի տալով կը յայտարարէ, որ իրաքցիները պէտք է սահմանադրութիւնը որդեգրեն յառաջիկայ 6 ամիսներուն ընթացքին:

«Հայաթ»ի համաձայն, Փաուրլ Իրաքի իշխանութեան ամբողջական փոխանցման համար երեք գլխաւոր հանգրուաններ նկատուի առած է: Ըստ անոր նախատեսութեան, 6 ամսուան ընթացքին սահմանադրութիւն պիտի ձեռնարկուի, ապա ընտրութիւններ տեղի պիտի ունենան ու անկէ ետք օրինական կառավարութիւն պիտի կազմուի:

«Լիուս» դիտել տուած է, թէ ռուսական կողմը ճկունութիւն կը ցուցաբերէ ՄԱԿի ժողովին, իրաքեան քարիւղի հարցով: Ըստ թերթին, Քէմի Տէյլիտի մէջ Փուրիս - Պուշ հանդիպումին գլխաւոր հարցերը կը հանդիսանան Իրանի եւ Իրաքի պարագայները: «Անուար» նշած է, թէ ամերիկացի Վորաւար Զինի անդրադարձաւ այն երեւոյթին, որ չի հաւատար Իրաքի վտանգաւոր ըլլալուն: Թերթը գրած է, թէ ամերիկացի մը սպանուեցաւ եւ երկու ուրիշներ վիրաւորուեցան Քերքուքի մէջ:

### ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳՆԱԳ

«Նահար» գրած է, թէ Երոսլայի երկիրները կը զգուշանան Միշել Արեւելքի մէջ կացութեան վատթարացումէն, իսկ քառեակը Իսրայէլի իրաւունք կու տայ իր ապահովութիւնն ու շահերը պաշտպանելու:

Ըստ «Անուար»ի, խաշիքեան բնակեցման վայրերու մէջ երկու իսրայէլացիներ սպանուեցան պաղեստինեան յարձակումի մը ընթացքին: Թերթը գրած է, որ քառեակը կը իրաւիւր խաղաղութեան ճամբու քարտէսը կիրարկելու:

«Սաֆիր» նշած է, թէ Հեպոնի մէջ ընդդիմադիր մը իսրայէլացիներ կը սպաննէ նահատակուելէն առաջ: Քառեակը պաղեստինցիները պատասխանատու կը նկատէ խաղաղութեան բանակցութիւններու կատարման:

Ըստ «Տիար»ի, Քորէյ իր կառավարութեան անդամներուն անունները կը յայտարարէ քանի մը օրէն, իսկ քառեակը կը յայտնէ, որ պաղեստինցիները պէտք է կատարեն բոնութիւնը, իսկ Իսրայէլ բնակեցումը:

«Լիուս» գրած է, որ պաղեստինցիները ընդվուտում են ՄԱԿի այն որոշումէն, որուն համաձայն, Իսրայէլի իրաւունք պիտի տրուի դիմադրութիւնը հարուածելու: Ըստ «Քիֆահ Արապի»ի, Շարուն հաստատու կը մնայ Արաբաթը տապալելու եւ պաղեստինեան շրջաններէն պայն հեռացնելու իր կեցուածքին վրայ:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ**  
Լիբանանի Շրջանային Վարչութիւն  
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿ  
ARAM KHATCHADOURIAN 100th ANNIVERSARY

Under The Patronage of H.E.  
**MR. GHAZZI AL ARIDI, Minister of Culture**

**ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ**  
Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամպլ

Գեղարուեստական Վեկավար՝  
Լուսինա Խորենացիի Անուան Շէֆանշանակիր՝  
**ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱՊԵԱՆ**

THURSDAY 2 OCTOBER  
SATURDAY 4 OCTOBER  
2003  
AT 8:30 PM IN UNESCO PALACE

Tickets on Sale: **Virgin** Down Town  
**BoxOffice** BHV Jnah  
**Hamazkayin Library • Discotheque Geka**  
**Studio Vatche • Library Obelix Antelias**

**PARREGAMUTYUN**  
State Dance Troupe of Armenia  
Artistic Director - Honoured Artist of Armenia  
NORAYR MEHRABIAN

**Cigaronne**  
ARZNI SPARKLING MINERAL NATURAL WATER

**ՄԵԿ ՀՈԿՏԵՄԲԵՐԵՆ ՍԿՍԵԱԼ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ ՀԵՏԵԻՇԵՔ ՆՈՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ, ՈՐՈՒՔ ԿԸ ԳՈՀԱՅՆԵՆ ՈՒՆԿՆԳԻՐՆԵՐՈՒ ՏԱՐԲԵՐ ԽՈՒՄԲԵՐ: ՀԵՏԵԻՇԵՔ ՄԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՍՆԱՆՈՒ ՀՄՄՐ ՆՈՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆԸ:**

**ՀԱՐՅԱԶՐՈՅՑ՝ ՊԱՐԻ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ» ԱՆՍԱՄՊԼԻՆ ԵԼՈՅԹՆԵՐՈՒՆ ԱՌԻՈՂ**

Հայաստանի պարի պետական «Բարեկամութիւն» անսամպլին ընդունուած առիթով, որոնք տեղի պիտի ունենան ԵՆԻՆԵՍԵՕի սրահին մէջ Հինգշաբթի, 2 եւ Շաբաթ, 4 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 8:30ին, «Վանայ Զայն»-էն լսեցէք հարցազոյց մը ԱՐՏԻԿ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ԱՄՏԱՐՈՒՄԻ ՀԵՆ ԵՐԵՂՅԱՔԻ, 30 Սեպտեմբեր 2003, առաւօտեան ժամը 11:00ին:

ՀԱՁԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ ՀԵՏ

14

ԲԱՌԱՐԱՆԻՆ ԲՈՂՈՐ ԲԱՌԵՐԸ

Ըսինքն արդեն թէ հարկւրաւոր էջեր կրնանք դարձրնել «Մատեան Ողբերգութեան» մէջ եւ կրնանք տեսնել որ չի սպառի Նարեկացիին երեւակայելու ու բառային նոր պատկերներ ստեղծելու թափը: Հիմա յանկարծ ուստում մը պիտի ընենք մտաւորապէս հարկը էջերու վրայէն ու պիտի բանանք հատուած մը, ուր Նարեկացին դարձեալ պիտի սկսի որակականներ ու ստորագիծեր գտնել Աստուծոյ համար: Ասիկա դարձեալ աղանջի պէտք մըն է: Բանաստեղծը ծուկի եկած է Աստուծոյ քաղցրութեան առջեւ, նոյնիսկ գետին կը փռուի որպէսզի խոստովանի ու պատմէ թէ իր մեղքերուն հետեւանքով ինչպէս դէպի մահ գործած է ան: Եւ հիմա կրկին իր ամբողջ յոյսը կնայած է Աստուծոյ, որովհետեւ...

Ըստ ամենայնի դուռն ես փրկութեան երաշխիք միայն:

Եւ այս նախադասութենէն վերջ կը սկսի զԱստուած ներկայացնել հետեւեալ տողերով: Աստուած՝ բոլորի, անճառ մեծութիւն, Անբաւ բնութիւն, իսկութիւն անհաս, Հգոր գորութիւն, անճատ լիութիւն: Բարեբարութիւն ամենակարող, Բարեհաճութիւն անստապարգեւ, Եւ իմաստութիւն անստուգաբիծ, Տեղեւորի մեծ, անճալի շնորհ, Բաղձալի բերկրանք, անխոյր հանգիստ, համարոյթ բժիշկ, անասան հաստում, Մոլորուածի դարձ, կորածի գտիչ, Վստահողի յոյս, խաւարածի լոյս, Յուզուածի անդորր, մեղեալի փրկիչ, Գերիի արձակիչ, մատնուածի թիկունք, Սահածի սատար, գայթակ ճեղքուկ, Եւ համբերութիւն տարակուսածի, Լոյսի կերպարանք, ցնծութեան հանդէս, Օրհնուածի անճրեւ, կենսաշունչ հոգի, Դեմքի գորութիւն, գլխու հովանի, Շրթերու շարժիչ, խօսքի ներազդում, ձշմարտութեան դուռ, երկնամասմ սանդուխ եւ այլ բազմազան գովեստի խօսքեր: Զորս չի կրնար արտաբերել երկրածին լեզուն...

Այս հատուածը մէկն է անհամար այն հատուածներէն որոնք լաւագոյնս կը ցոլացնեն այն մթնոլորտը որ իր դրոշմը դրած է «Մատեան Ողբերգութեան» հատորին ու Նարեկացիի զգացականութեան վրայ: Եթէ ժամանակ ու համբերութիւն ունենայինք, պիտի արժէր որ մի առ մի կանգ առնէինք Աստուծոյ ուղղեալ վերի գովասանքներուն վրայ: Ինչպէս ինք ալ կ'ըսէ, «գովեստի խօսքեր» են ասոնք: Բայց իսկապէս միայն գովեստի խօսքեր են, թէ ոչ այդ խօսքերէն իւրաքանչիւրը Աստուծոյ վերագրուած բարութիւններու ու յատկութիւններու նոր էջ մը կը բանայ մեր առջեւ: Վերի տողերը հոս արձանագրելու ընթացքին բազմաթիւ տողերու վրայէն ալ ցտակեցինք, բայց ամբողջ «Մատեան»ին մէջ տակաւին ուրիշ տասնեակներով էջերու վրայ պիտի գտնենք գովեստի նորանոր խօսքեր, որոնք անպայման մտածումի ու բանաստեղծական զգայնութեան հորիզոններ կը բանան մեր առջեւ: Բայց պէտք կ'ա՞յ հետեւ երթալու: Վերի տողերուն վրայ կրկին ակնարկ մը նետենք:

Անբաւ բնութիւն, իսկութիւն անհաս, անհատ լիութիւն, բարեբարութիւն ամենակարող, բարեհաճութիւն անստապարգեւ, Եւ իմաստութիւն անստուգաբիծ: Թարգմաններ անկախ պարզ լեզուի: Բնութիւն որ սահմանափոխ չունի, իսկութիւն որուն կարելի է հասնել, լիութիւն որ անհատնում է, բարեբարութիւն որ ամէն մարդէ ներս ամենակարող է, բարեհաճութիւն որ առատութիւն կը պարգեւէ, Եւ իմաստութիւն որուն վրայ ստուերի որեւէ բիծ չկայ:

Տենչալի ունէր: Նարեկացիին ուրիշ ո՞վ պիտի մտածէր այսպիսի գովեստի խօսք մը արտասանել Աստուծոյ համար: Նուէրներուն ամէնէն բաղձալին:

Կամ օրհնութեան անճրեւ: Կամ կենսաշունչ հոգի, ճշմարտութեան դուռ, երկինքներու մէջ պտղտկող սանդուխ: Դեռ ինչ: Այս տողերուն մէջ գործածուած բանաստեղծական պատկերներէն ո՞ր մէկը, կամ այս տողերուն մէջ գործածուած բարձր բառերէն ո՞ր մէկը ողջունենք առանձնապէս:

Դարձեալ ուստում մը ընենք էջերուն վրայէն ու ըստ բարտի որսանք «գովեստի նոր խօսքեր»:

Աստուած փրկութեան եւ ողորմութեան, Բուժման, նորոգման եւ անողորմութեան: Լուսաւորութեան եւ կենդանութեան, Քաւման, յարութեան եւ անմահութեան, Յիշէ գիտ, երբ գաս արքայութեամբ քու, Ահաւոր, հգոր, բարեբար, գթած եւ ամենաստեղծ, Կենդանի, գովեալ, ամենակատար, Մերձուոր համայն արարածներու հեծութիւններուն: Կը պաղատիմ քեզի...

Չափազանցած չենք ըլլար եթէ ըսենք որ Նարեկացիին իր բովանդակ Մատեանին մէջ Աստուծոյ փառաբանութեան համար թերեւս օգտագործած է Հայոց լեզուի բառարանին բոլոր բառերը: Չափազանցած չենք ըլլար անեւ եթէ ըսենք թէ Նարեկացիին այդ բառերէն իւրաքանչիւրին բնագոյնով է նոր ու ճիշտ իմաստ:

Ռ. ՀԱՍՏԵՃԵԱՆ

ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԻՄԱԳՐԱԻԱԾ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐԸ ԱՅՍՕՐ

Լիբանանահայութեան կեանքը յուզող ամէնէն հրատապ հարցերէն մէկը կրթական տագնապն է: Ոչ թէ միայն վերամուտի ամիսներուն, այլեւ ամբողջ տարուան ընթացքին գիտակից լիբանանահայը կը տառապի այս հարցերով: Ամէնէն բարձր դիրքի վրայ գտնուող պատասխանատուներէն սկսեալ, հոգաբարձուն, տնօրէնը, ուսուցիչը եւ մինչեւ ամէնէն փոքր աշակերտին ծնողը իրենց ամէնօրեայ խորհուրդներուն նիւթ կը դարձնեն Հայ դպրոցը:

Կեանքի մէջ հանգրձաններ կան, երբ վայրկեան մը կանգ առնելու ենք, եւ մեր հեզք կասեցնելով՝ փնտռելու ենք մեր գոյապատճառը: Հայ դպրոցին գոյապատճառն է, որ ուղղութիւն տալու է անոր ընթացքին եւ խանգարելու է իւրաքանչիւր անհատ, որ դեր ունի անոր կառոյցին մէջ: Ինչո՞ւ գոյութիւն ունի լիբանանահայ դպրոցը: Կ'արժէ բարոյապէս եւ նիւթապէս այնքան սուղ գին վճարել անոր գոյատեւման ի խնդիր:

Լիբանանի Հայ Աւետարանական կրթական խորհուրդը յետ պատերազմեան տարիներու իր վերականգնման առաջին շրջանին իսկ հարցականի տակ դրաւ Հայ աւետարանական վարժարանին գոյապատճառը: Արդիւնքը եղաւ առաքելութեան յստակ համոզում մը, որ առաջնորդող մարմիններուն ծառայեց եւ կը շարունակէ ծառայել իրենց ուղղութիւն: Յիշեալ

առաքելութիւնը ունի երեք յատկութիւններ՝ կրթական-ծրագիր, հայկական ինքնութիւն եւ հայ աւետարանական անունը: Եթէ օտար դպրոցներ նպատակ ունին, հայ դպրոցը ունի տեսիլք եւ առաքելութիւն:

Թէ ինչ են Հայ դպրոցին դիմագրաւած մարտահրաւէրները այսօր: Անկասկած նիւթական մտահոգութիւնները կը գրաւեն առաջին դիրքը: Ոչ թէ միայն այդքան, այլ անոնք գիշեր ու ցերեկ կը հալածեն Հայ դպրոցի առաջնորդները, որոնք յաճախ իրենց բունը փայտեցնելով՝ կ'իյնան նիւթականէն աւելի վտանգաւոր թակարդի մը մէջ՝ իրենց առաքելութիւնէն հեռանալու թակարդը:

Սակայն այսօր պիտի չխօսինք նիւթականին մասին: անոր ընթացքին եւ խանգարելու է իւրաքանչիւր անհատ, որ դեր ունի անոր կառոյցին մէջ: Ինչո՞ւ գոյութիւն ունի լիբանանահայ դպրոցը: Կ'արժէ բարոյապէս եւ նիւթապէս այնքան սուղ գին վճարել անոր գոյատեւման ի խնդիր:

Եթէ վայրկեան մը կանգ առնենք եւ երեւակայենք, թէ մեր նիւթական բոլոր հարցերը լուծուած են, եւ թէ պէտք չկայ անոնց որեւէ ուշադրութիւն դարձնել, ինչ պիտի ըլլայ պատկերը: Դժուար է երեւակայել այս պարագան, որովհետեւ սովորութիւն դարձուցած ենք ամէն բան նիւթականի ոսպնեակին ընդմէջէն դիտել: Բայց... եկէ՛ք, փորձենք:

Նիւթական բեռները մեր երեւակայութեան մէջ թօթափելէ ետք մակերես կը բարձրանայ հետեւեալ միակ մարտահրաւէրը՝ որակի հարցը: Հայ դպրոցը ցանկալու է իր լաւագոյնը տալ: Նախանձախնդրութեան եւ բժախնդրութեան պա-

կան է, որ մեզ միջակութեան կ'առաջնորդէ: Նախանձախնդրութիւնը, բժախնդրութիւնն ու լաւագոյնին ձգտելու տրամադրութիւնը դրամով չեն գնուիր: Կասկած չունիմ, որ մենք կրնանք շատ աւելի բարձր որակով ներկայանալ աշակերտներուն եւ ծնողներուն: Միայն ուսումնական մակարդակի մասին չէ, որ կը խօսինք, այլ՝ վարչական, կազմակերպչական, մանկավարժական, եւ այլն:

Որակի բարելաւումի գլխաւոր բանալին խանդավառութիւնն է, լաւագոյնը տալու մղումն է: Իսկ խանդավառութեան կրակը վառ պահող ազդակները՝ առաքելութիւն եւ գնահատանք: Արդեօք դպրոցի դասապանէն մինչեւ քարտուղարը, ուսուցիչը եւ տնօրէնը խանդավառ թիւրեք պաշտօններով: Արդեօք անոնք նոր տարբերջանք կը դիմագրաւեն այդ գիտակցութեամբ, թէ իրենց պաշտօնը խիստ կարեւոր է դպրոցի վեհ առաքելութեան իրագործումին համար:

Լիբանանահայ դպրոցը ունի մեծ կարելիութիւններ, թաքուն ուժեր, կարողութիւններ: Մեզի կը մնայ գտնել խանդավառութեամբ մարակեւ, ապա անոնցմէ ակունկալել միայն իրենց լաւագոյնը:

ՍԵՒԱՆ ՊԱՍՏՊԱՆԵԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻԶ  
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ  
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ


Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս մասնաճիւղի տարեկան բանակումը տեղի ունեցաւ 24 Օգոստոսին Այն-ճարի մէջ: Առաւօտեան ժամը 7:30ին, «Աղբալեան» ակումբը հաւաքուած երէց պարմանուհիները, արիւններն ու արեւոյշները, ինչպէս նաեւ՝ խմբագրական կազմի անդամները ուղղութեամբ բանակավայր, ուր անոնց առաջին գործը եղաւ բանակավայրի յարգարում եւ դասաւորում:

Խանդավառ եւ ժիր միօրեայ աշխատանքէ ետք բանակավայրը ունեցաւ իր գեղեցիկ մուտքը, դրօշակի կայմը, խոհանոցը եւ մթերանոցը:

26 Օգոստոսին բանակողներուն միացան մասնաճիւղի մեծ գայլիկ ու արծուիկ խումբերը, իսկ 28 Օգոստոսին Այնճար հասան պոստիկ գայլիկ արծուիկները: Մէկ օր ետք բանակավայրը զարգարեցին մասնաճիւղին մոկլիները՝ իրենց լուսաւորող ժպիտներով:

Ձեռային զանազան աշխատանքներով, Հ.Մ.Ը.Մ. ակաւ դաստիարակչական ծրագիրներով, արշաւներով եւ նորանոր ներկայացնել բանակումին ընթացքին խումբերուն կատարած գործունէութիւնը: Իւրաքանչիւր սկաւտ ճարտարագէտ եւ լիցքատրուեցաւ այս բանակումին ընթացքին: Մեծ գայլիկ արծուիկները, արի արեւոյշներն ու երէց պարմանուհիները սպիտակաթիւ իրարմէն իրարմէն, պաշտօնի եւ աստիճանի տուչու-



Մանճեան ընկերացաւ անոնց եւ ներկայացուց գիտութեան կեանքի հանգրձանները, հրասայլերու ու ռումբերու գործածութեան ձեւերը եւ այլն:

Հետաքրքրական եւ արկածախնդրական էր նաեւ ցեխաշաւը, որուն մասնակցեցան մեծ գայլիկ արծուիկները, արի արեւոյշներն ու երէց պարմանուհիները, որոնք կէս ժամ - կէս արթուն վիճակի մէջ միւրճուեցան ցեխերուն մէջ եւ փորձեցին լողալ անկէ դուրս: Թէեւ բաւական դժուար, սակայն նոյն ատեն արկածախնդրական այս արշաւը ոգեւորեց բոլորը:

29 Օգոստոսին տեղի ունեցաւ խարուկահանդէսը եւ մասնաճիւղի սկաւտներու ծնողներու, Հ.Մ.Ը.Մ. Շրջանային Սկաւտական խորհուրդի եւ խմբագրութեան ներկայութեամբ տեղի ունեցան դրօշակի արարողութիւն, պաշտօնի եւ աստիճանի տուչու-

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՉ

Հետաքրքրական մարդ է Ազրայէլցանի վարչապետ ԻլիաՍ Ալիեւ: Բայց մանաւանդ քաջ:

Հետաքրքրական տիպար է, որովհետեւ ուժեղ երեւակայութեան տիպար է: Ըստ իրեն, աշխարհի քարտէսին վրայ շրջաններ կան, որոնք իր բնութագրումով «գորշ» գոյն ունին: Այսինքն՝ շրջաններ, որոնց վրայ միջազգային ընդունուած կանոններն ու օրէնքները հակակշիռ չունին եւ ուր ազատութիւն կրնայ «բուժանուիլ» միջազգային ահաբեկչութիւնը: Օրինակ՝ (մի՛ գարմա-նաք)՝ Հայաստան եւ Լեւոնայից Դարաբաղ... Եւ ի տես այս «անտանելի» կացութեան, իր համբերութիւնը սպառելու վրայ է:

Այսինքն՝ երկու պետութիւններ (մին միջազգայնօրէն ճանչցուած), ուր ներկայութիւն են բազմաթիւ օտար դեսպանատուներ եւ միջազգային քաղաքական, մարդասիրական թէ ելեմտական հաստատութիւններու գրասենյակներ, որոնք կը գործեն միջազգային ընդունուած կանոններով եւ ամենօրեայ շփումներու մէջ են իշխանութիւններուն հետ: Իսկ «գորշ» Հայաստանը, անդամ է ոչ միայն ՄԱԿին, այլ ցանկէ միջազգային այլ կազմակերպութիւններու, ինչպէս՝ Եւրոխորհուրդին եւ Եւրոխորհրդին, ինչպէս՝ միջազգային ընդունուած կանոնակարգով:

Ալիեւ ցան «քաջ» է, որովհետեւ «գորշութեան» մասին կ'արտայայտուի հանգամանօրէն, միջազգային բարձրագոյն բեմէն՝ ՄԱԿի 58րդ նստաշրջանին, առանց վախճալու, որ իր հարիւրաւոր պաշտօնակիցները կամ այլ երկիրներու պաշտօնակալները կ'ընդունեն կրնան հեզանքով ընդունիլ իր ըսածները:

Ալիեւ ՄԱԿի բարձրագոյն բեմը կը շփոթե՞ր Պարոյի հետադարձի կայանին հետ, ուրկէ կըրնայ ամբոյսավարութեան լաւագոյն նմուշները հրամցնել իր լսարանին՝ առանց հարցապնդումի եւ թարգմանելու վախի կամ առանց պետական մարդու վարկ մը ապահովելու մտահոգութեան: Բայց այս բոլորը իր խնդիրներն են:


Մեզ շահագրգռողը այս պարագային մեր «փոքր անուն» է: Ինչպէս կը բնութագրէր քանի մը օր առաջ Լեւոնայից Դարաբաղի Հանրապետութեան նախագահը, հայկական կողմը կը մնայ սրբափ՝ «խաղաղութիւն փափաքող պատերազմին պէտք է պատրաստ ըլլայ» տրամաբանութեամբ: Ալիեւներու ամբոյսավարութիւնները կամ միջազգային բեմերէ արտայայտուած առնուազն անլուրջ յայտարարութիւնները մեզ չեն կրնար շփոթի մատնել:

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

Librairie Idéale advertisement featuring illustrations of books and children, with text in Armenian describing the store's offerings.

BALTAYAN ELECTRONIC advertisement featuring various electronic products like a camera, mobile phone, and hair dryer, with contact information.





# Աշակուբայիս Էջ

## ԳՐԵ՛Լ, ԹԷ ԶԳՐԵԼ...

Կեանքի ասպարեզին մէջ յաջողելու եւ, մահաւանդ, բարձունքներ նուանելու պայքարը մեր օրերուն յաճախ կը վերածուի ընչաքաղցութեան: Ընձամուրեց-քի, որ իր կարգին բարոյական դասական ըմբռնումներէ կը զրկէ մրցակցութեան ոգին, կը սաստկացնէ անոր ընթացքը եւ ինքնաբերաբար անհատը կը մղուի որդեգրելու ժխտական միջոցներ:

Ահաւասիկ հոս է, որ շատեր ստորութիւնը կը շփոթեն խորամանկութեան հետ, կը գործեն սանձարձակօրէն, եւ ի վերջոյ անարժանները վեր կը բարձրանան, իսկ արժանաւորները ոչ միայն լուսանցքին վրայ կը մնան, այլ նոյնիսկ երբեմն կը վարկաբեկուին ու կ'անարգուին:

Թեւեւ այս երեւոյթը կ'ընդգրկէ կեանքի բոլոր երեսներն ու մարզերը, սակայն առաւելաբար կը դրսեւորուի գրականութեան ու այլ տեսակի արուեստներու պարագային, որովհետեւ, ինչպէս Արիստոտէլ կը հաստատէ (իր «էթիքա» գիրքին մէջ), թէ Աստուած երբ նախանձը պիտի շնորհէր, ան նախ լիաբուն տուաւ արուեստագետներուն, եւ ապա յատկանշեց մնացածը միայն բաժնեց ժողովուրդին:

Իսկ ի՞նչ կ'ընեն գրողներն ու արուեստագետները: - Խմբակցութիւններ կը կազմեն եւ գիրար կը գովեն պարզապէս անուշիկ նայելով:

- Ի յայտ կու գան ոչ մասնագետ գրականագետներ եւ արուեստաբաններ, որոնք աւելի կը զբաղին նոստումնաբանութեամբ ու սին գերբողներ հիւսելով, քան բնագիտութեամբ:

- Ունամիական ու անճանկան կայքերը աւելի ազդու ու գործօն կը դառնան, քան՝ ճշմարտութիւնը:

- Հարցերուն բարոյական եւ ուսանելի կողմերը գիտակցաբար կը շրջանցուին:

- Եւ ի վերջոյ, թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր կերպով բանարկութեան կ'ենթարկուին եւ երբեմն նաեւ կը ձաղկուին իրաւ բնագիտներն ու գրականագետները: Այս եւ նմանօրինակ այլ գործօններ միջակութիւններ կազմուած քանակական ուժ կը դառնան, որակը կը նահանջէ, եւ յաճախ նաեւ աւել կը գործեն կեանքի տարբեր մարզերուն մէջ:

Այս բոլորին մէջ լրջօրէն կը դժուարանայ իրաւ եւ արդարամիտ բնագիտներուն գործը եւ գլխաւոր հարցը կը ծնի...

Դրե՛լ, թէ չգրել...

Այո՛, գրե՛լ այս բոլորի մասին, թէ՛ չգրել:

Խօսքը կը վերաբերի առաւելաբար հայրենի եւ Լիբանանի այն բնագիտներուն, որոնք թերութիւնները շրջանցելէ ետք (յաճախ հարկադրաբար), բարեացակամ վերաբերմունք կը ցուցաբերեն կերպարուեստագետներուն նկատմամբ (որմէ գերծ չենք նաեւ մենք):

Երիտասարդներն ու սկսնակները թեստիկ չընելու, մշակութային միութիւններուն կամ հաստատութիւններուն վնաս չհասցնելու, ցուցարանները նեղ կացութեան չմատնելու, արուեստագետներուն հետ կայքերը չխանգարելու, եւ կամ առհասարակ արուեստը քաջալերելու բարի ցանկութեան միտումներով բնագիտները աւելի կը խօսին արուեստի կամ արուեստագետի դրական կողմերու մասին եւ կը փորձեն շրջանցել ժխտական երեսները: Անոնք եթէ երբեք կը խօսին թերութիւններու մասին, ապա անոնց նկատողութիւնները կան եւ առաջ առաւելաբար ենթակայական բնոյթ կը կրեն, քան՝ առարկայական:

Այս բոլորին հետեւանքները ժխտական անդրադարձ կ'ունենան թէ՛ արուեստագետին, թէ՛ արուեստագետին եւ թէ՛ նոյնիման արուեստաբանին վրայ:

Անարժան ստեղծագործողը կ'իյնայ ինքնախաբէութեան մէջ՝ յաճախ դառնալով ամբարտաւան ու այլամբո:

Արուեստագետները կը մղուին, կը շուարին եւ յաճախ կը կորսնցնեն իրենց վստահութիւնը թէ՛ արուեստին, թէ՛ արուեստագետին, եւ թէ՛ մահաւանդ բնագիտին նկատմամբ:

Յաւելեալ գովքի եւ ներբողի արժանացած արուեստագետը թեւեւ ներքնապէս կը հրճուի, սակայն ո՛չ կը յարգէ եւ ո՛չ ալ կ'ակնածէ բնագիտներ, իսկ իրաւ բնագիտը արդարամիտ մնալու եւ արդարօրէն գործելու պարագային, որքան որ թշնամիներ կը շահի անարժաններու եւ միջակներու մէջ, նոյնքան ալ գահահատողներ կ'ունենան արժանաւորներուն եւ տաղանդաւորներուն մէջ: Ի վերջոյ, արուեստի շահն ու ապագան կը պահանջեն անկողմակալ եւ անշահախնդիր բնագիտութիւն:

Թեւեւ ժամանակակից ենթակայական եւ հատուծական շահերու տիրապետութեան տակ թափանցիկութիւնն ու առարկայականութիւնը չափազանց դժուարացած են, այսուհանդերձ ապագային արուեստը կը մարքագտուի իր աղտոնութիւններէն ու ժամանակի եւ տարածութեան մաշումին կը դիմանայ միայն իրաւ եւ իսկական արուեստը, եւ բոլոր սին գովասանքներն ու ներբողները կ'արժանանան աղբաղցին մէջ նետուելու նկատագրի:

Արուեստը այն մարզ է, ուր կեղծիքն ու սուտը միայն ժամանակաւոր հոշակ կը բերեն միջակութիւններուն:

Ապագան վերապահուած է միայն իրաւ արուեստագետներուն եւ արդարամիտ բնագիտներուն:

ՄՈՒՍԵՍ ԾԻՐԱՆԻ

# ԱՌԱՍՊԵԼԻ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՆԻ ԽԱԶՄԵՐՈՒԿՈՒՄ

**Շայրենասեր եւ այլախոհ, հայրենի գեղանկարչութեան միջին սերունդի կարկառուն դէմքերն է Արկադի Պարուսարեանը: Ան այն ղեկներն է, որոնք այսօր յաջողած են իրենք զիրենք պարտադրել Արեւմտեան Աշխարհին մէջ: Անոր գործերը փնտռուած են յատկապէս Գերմանիոյ մէջ: Անոր ստեղծագործական կեանքի մասին ընդհանուր գաղափար մը տալու համար ստորեւ կու տանք ակնարկ մը՝ քաղուած հայրենի «Գարուն» ամսաթերթէն:**

Դեռ մանկուց գիտէի, որ նկարիչ եմ դառնալու: Գանձասարի ստորոտում մի գիւղ կայ՝ Մակաւուտ է կոչուում: Մանկութիւնս այնտեղ եմ անձկացրել: Բնութիւնն այնքան գեղեցիկ էր, որ տեսածս երազում էի նկարել...

Պաքուում պիտներ պալատի նկարչական խմբակ էի յաճախում: Բախտս բերել էր, փեթերսպուրկցի շատ էր մի ուսուցիչ ունէի՝ Վոսքրեսենսքի ազգանունով: 7-8 տարեկաններիս վտարապսուտը ներքին վարուած էր՝ վերածննդի վարպետների,

համաշխարհային խոշորագոյն նկարիչների գործերին ծանօթացնելով, նոյնիսկ նրանց մասին նկարահանուած ֆիլմեր էր ցուցադրում:

Երբ դպրոցն աւարտեցի, Մոսկուայում սովորելու՝ հանրապետութեանը յատկացուած մի ուղիք գործն ինձ տուեցին: Ընդունուեցի Միտիոկոնովի անուան գեղարուեստական բարձրագոյն ուսումնական ինստիտուտի նկարչութեան բաժինը: Մի տարի էլ չսովորեցի: Հասկացայ, որ ուզածս այլ բան է: Ինքս ինձ ասացի: «Ձէ, իմ տեղը Հայաստանում է: Ես պիտի երեւանում սովորեմ»...

Գերմանիայի հանդէպ աշխարհի արուեստագետների հետաքրքրութիւնն անչափ մեծ է: Յատկապէս վերջին տարիներին շատերը, նոյնիսկ ամերիկացի, ֆրանսացի նկարիչները, անպայման ուզում են այնտեղ ցուցադրուել: Եւ այդ նախընտրութիւնը պատահական չէ: Գերմանիայում ժամանակակից արուեստագետներին այժմ աւելի մեծ ուշադրութիւն է դարձուում, քան եւրոպական միւս երկրներում:

Մայրաքաղաքի կենտրոնական պողոտան սկզբնաւորող շէնքերից մէկի վերնաբարկու կայ մի արուեստանոց, ուր ստեղծագործում է նկարիչ Արկադի Բաղդասարեանը, որին աւելի շատ Արկո անունով են ճանաչում: Աշխուժ ճամտոցով վառուող բուխարիկն արուեստանոցի փոքրիկ անկիւնն է տաքացնում: Յետոյ՝ արդէն գեղանկարչների տաք գոյներն են մոռացնել տալիս թէ՛ արուեստանոցի, թէ՛ դրսի պարզութիւնը: Առհասարակ,

արուեստագէտի յարկի տակ լինելը հայրենի բնաշխարհի որեւէ անկիւն գնալու, բնութեան հետ հաղորդակցուելու պէս մի բան է արուեստի գործերն էլ կեանքի պարտադրած անուրախ մտքերից ազատելու, մնալուն արժէքների շուրջ խորհրդածելու, հոգեւորի ոլորտները տանելու ուժ ունեն: Երկու դէպքում էլ օրեր, ամիսներ անց առանձնապէս ազդու մի քանի պատկերների մանրամասները վերականգնելու եւ տպաւորութիւնները հոսքին տրուելու լուսաւոր գեղարուեստի ստեղծումն է: Արկոյի արուեստանոցում նման ներգրգեցութեամբ մի քանի նկարներ են առանձնացուում: Մէկը «Քրիստոսն» է, որը նախ գունային միատարր լուծումով է գրաւում: Այդպիսի գոյն լուծում է մայրամուտին, երբ արդէն չենք ազդու արեւագոյնի վերջին շողերը, վերջին անդրադարձով շառագունում են հորիզոնում յայտնուած ամպի քուլաները: Երկնային հրազոյնի մեղմ երանգը կրող կուտին Յիսուսին՝ կենդանի արտայայտութեամբ դէմքն է, նրա թափանցող հայեացքը երկխօսութեան է մղում: Եւ ոչ թէ արուեստանոցում, այլ գործող որեւէ եկեղեցում

գտնուելու ուզուում, Աւագ Ուրբաթին բարձրեալից ներում, թողուցիւն, ախկցութիւն հայցելու եկածները հաստատապէս այդ նկարի առաջ էին կանգնելու...

«Դժոխքի դուռը» գործի բնօրինակը գտնուում է Հռոմում: Նկարն արուել է Ֆլորանսում կազմակերպուելիք «Հայ արուեստագէտների տանթէականը» ցուցահանդէսի համար: Սա հանճարեղ ֆլորենսացու գրական երկի մի քանի պարունակների գեղանկարչական ինքնատիպ ընդհանրացումն է: Աւագ գրչակցի «guarda e passa» («նայիր եւ անցիր») պահանջին համապատասխան անդրաշիրմեան աշխարհ տանող ճանապարհի առաջին հատուածն անցնելու վերջին շիրմիսի հետ յայտնուել է դժոխքի նախադրանք: Կապտականաչաւունի մուսլիմանի շեղումով ուրիշ լուր անգնում են երկու բանաստեղծների կերպարները: Լոյսի շողերն ասես ընդգծում են, որ նրանցից մէկին է տրուում Հազարտի պէս անդրաշխարհից ետի՛ պէս այնպիսի կեանքը առնալու առանձնաշարժը: Մինչ այդ նրա հայրենացիքն աւելի շուրջ է հողը: Եւ հողմապտոյտի մէջ՝ առնուած կտրատուող ծառերի պէս միմեանցից կառնելով, վերից վար, վարից վեր մարդկային մարմիններ են գալարչում: Աշխուժ ճամտոցով վառուող բուխարիկն արուեստանոցի փոքրիկ անկիւնն է տաքացնում: Յետոյ՝ արդէն գեղանկարչների տաք գոյներն են մոռացնել տալիս թէ՛ արուեստանոցի, թէ՛ դրսի պարզութիւնը: Առհասարակ,

սպինների առանձին մանրամասներ չեղտելով, առաւել ազդեցիկ է դարձրել ասեղիքը:

Տանթէի՝ «Թողէք ամէն յոյս, երբ մտնում էք այստեղ» պատգամը խախտելով՝ մտապատկերումը վերականգնում եւ արուեստագէտի վաղ շրջանում արուած եւս մի գործ, որն ընդամենը երեք գոյնի ընտրութեամբ է իրականացուած՝ բալի մուգ կարմիր տարածւած շերտ «խախտող» արձանի բնագոյնով սեւ հիւսակներով սլացքը միտքը տանում է երկնի առեղծուածային անհունը՝ «սուղուելու վերին սահմաններն արփի... չափելու ահեղ բացերն անչափի» (Յովհ. Թումանյան): Նկարը կոչուում է «Տիեզերք»: Համարուն շարքից հեղինակի մօտ պահպանւած միակ աշխատանքն է: Մնացածները նկարչի բազմաթիւ ուրիշ գործերի շարքում աշխարհի տարբեր քաղաքների պատկերներ արտահայտում եւ մասնաւոր հաւաքածուներում են: Եթէ նկարն աւարտուած է, ուրեմն ինքնուրոյն կեանքով է պարունակ: Չնայած բաժանուելը դժուար է, բայց ես նրանց ազատ եմ թողնում: Ոմանք վերադառնում են, ոմանք ոչ: Թէեւ տարբեր շրջաններում ստեղծուած գործերից մի քանիսը, յատկապէս եթէ շարք են կազմում, անպայման պահում եմ մօտս: Պատահել է, որ ես նրանց բոլորովին անսպասելի մի տեղ տեսելու անակնկալի տեղով զարմացել եմ, ուրախացել: Կարծես սեփական եսիդ եւ հանդիպում: Անցեալը ես վերադառնում, մոռացուած գեղարուեստներ են վերապրում: Նման դէպքերում ամփոստում ես, որ քեզանց հետ է եմ:

Ա. Բաղդասարեանի ստեղծագործական ճանապարհը սկզբնաւորող գործերի առաջին ցուցադրութիւնը կազմակերպուել է Երեւանի ռատիոյի տանը: 70-ականների կէսերին վերացական կամ, ինչպէս նկարիչն է նախընտրում կոչել, մոտեւոր նկարչութեամբ մուտք գործելը թրջակի համարձակութիւն էր պահանջում: Ինքնուրոյն լուր ստեղծողներին, էտմոնորսի յայտնների երկրում խրախուսում ու յատկապէս հովանաւորելով՝ վերին սանդղակների միջին էին տալիս համարձակութեան նկարչութիւնը մայնափարականի ուղղութիւնը: Մեծ երջանակներն ընտրած արուեստագէտներին: Չձեռնուած, թարմ արտայայտչաձեւերով ստեղծագործող արուեստագէտները, քննադատութեան ենթարկուելով, մեթուում, լաւագոյն դէպքում՝ անուշադրութեան էին մատնուում: Հատուտ է նաեւ, սակայն, իրավիճակն զգալիօրէն ուրիշ էր: Համեմատաբար բարենպաստ պայմաններն այնպիսի գոյնութիւններն ոչ միայն մշակութի, այլեւ գիտութեան ասպարէզի գործիչներն էին: Նկարչի տանը, ժամանակակից արուեստի թանգարանում, ռատիոյի տանը, ճարտարապետների, գրողների միութեան սրահներում, «Գարուն»ի խմբագրա-



տանը, աւելի ուշ՝ նկարիչների միութեան «Երրորդ յարկ» անուանուած վերնաբահում, այսպէս կոչուած, «ձախ» նկարիչները ցուցադրուելու հնարաւորութիւն ունէին: Կարծես Արիստեանի եղբայրները հիմնադրած բնագիտութեան հիմնարկը: Եւ սրա հետ համագործակցող հայ եւ օտարազգի գիտնականներ կային, որոնք «մերժուած» արուեստագէտների անհատական ցուցահանդէսներ կազմակերպելով՝ թէ՛ բարոյական, թէ՛ նիւթական աջակցութիւն էին ցուցաբերում: Հէնց այդ գիտնականների (Իոսիֆեան, Հէյֆից, Մարիթոնով եւ այլք) հաւաքածուները, որոնք տեղ գտած Արկոյի ստեղծագործութիւնները շատերը հետազոյում յայտնուեցին երկրի սահմաններից դուրս: Բախտաւորութիւն է, երբ արուեստագէտն ապրում է այնպիսի միջավայրում, որտեղ համախոհներ ունի: Հարցն այն չէ, թէ քո գործերը ինչպէս են գնահատուում կամ ընդունուում: Չէ՛ Շատ կատարելու է, երբ միջավայրումդ կան մարդիկ, որոնք հաւատում են: Երեւանում նման մթնոլորտ ստեղծող մտաւորականներին մի խումբ կար, որոնց շարքում էտմոն Աւետեանն էր, Հենրիկ էդոյեանը, Արտեմ Յարութիւնը, Վիգէն Բաբայանը: Ի դէպ, Բ. Բաբայանն էր իմ առաջին ցուցահանդէսի կազմակերպիչը: Յետոյ այլախոհութեան պատճառով նրան երկրից վարարեցին, էտմոնորսի կատարելութիւնը... Հա, արուեստաբան Մարտին Միքայէլեանը կար: Ասում եմ՝ կար, որովհետեւ հիմա կարծես մի կողմ է քաշուել: Իսկ այն տարիներին շատ էր հետաքրքրում նկարիչներին որ գործերով, խոր վերլուծական յօդով վերին սանդղակների միջին էին տալիս համարձակութեան նկարչութիւնը մայնափարականի ուղղութիւնը: Մեծ երջանակներն ընտրած արուեստագէտներին: Չձեռնուած, թարմ արտայայտչաձեւերով ստեղծագործող արուեստագէտները, քննադատութեան ենթարկուելով, մեթուում, լաւագոյն դէպքում՝ անուշադրութեան էին մատնուում: Հատուտ է նաեւ, սակայն, իրավիճակն զգալիօրէն ուրիշ էր: Համեմատաբար բարենպաստ պայմաններն այնպիսի գոյնութիւններն ոչ միայն մշակութի, այլեւ գիտութեան ասպարէզի գործիչներն էին: Նկարչի տանը, ժամանակակից արուեստի թանգարանում, ռատիոյի տանը, ճարտարապետների, գրողների միութեան սրահներում, «Գարուն»ի խմբագրա-

կուն սեղանին է դնում գուտ իրեն յայտնի համեմունքներով պատրաստած համեղ ձուկը: Ներկայ ուսանցած օրերի շուրջ ընթացող գրոյցը շարունակելով՝ յիշուում է նաեւ, որ ուսանելու եւ սրան յաղորդած տարիներին ժամանակի զգալի մասն անց էր կացնում գրադարաններում, համաշխարհային արուեստի կոթողներին ծանօթանալու, գրականութեան հատնտիրները կարդալու, մասնագիտական խնդիրների մէջ խորանալու համար: Եւ շրջան կար, որ Մատենադարանից դուրս չէի գալիս: Մանրանկարիչների գործերն էի ուսումնասիրում: Պատահում էր, որ կրկնօրինակներ էի ստանում: Ինձ զարմացնում էին մեր մանրանկարչութեան ոչ միայն գոյների շեղութիւնն ու ներդրանակութիւնը, այլեւ կառուցուածութիւնը: Նայում եւ աչքում եւս փոքր ծաւալների ինչպիսի՛ կոթողայնութիւն, արտայայտչականութեան եւ մատուցած ձեւերի ինչպիսի՛ կատարելութիւնը... Մեր Գարտարապետական շինութիւններին նման են՝ անթերի, ամբողջական: Ուրիշ մի բան էլ ինձ համար պարզեցի: Հասկացայ, որ վերածննդի վարպետներից շատերի (Մատենան էր, Հենրիկ էդոյեան, Ճոթթօ եւ այլք) ստեղծագործութիւնների վրայ մեր մանրանկարչութեան ազդեցութիւնը կայ: Դա ինձ համար իսկապէս յայտնութիւն էր: Ինձ այնպէս է թւում, որ իմ նկարները՝ «Տաճար»-ը, «Նախաշինութիւն», «Առաքեալը», եւ, առհասարակ, իմ գործերի կառուցողական ակունքներն այնտեղից են գալիս: Պարզ նմանութիւն է: Արմատներով փոխանցուած ժառանգականութեան արդիւնք է: Հետաքրքրական է, որ այդ կապի մասին աւելի շատ դրսի արուեստաբաններն են գրում: Տեսնում են: Անկեղծ ասած՝ դա ինձ ուրախացնում է: Ինձ դուր է գալիս, երբ նկատելով իստում են նաեւ իմ նկարների երաժշտականութեան մասին: Եւ դա պատահականութեան է: Առանց երաժշտութեան երբեք չեմ նկարում: Պահ է թելադրում, թէ յատկապէս ինչ տեսակի երաժշտութիւն պէտք է հնչի այս կամ այն մտայնացուած իրագործելու ժամանակ: Ներքին կաշկանդումները ազատուելու համար եւ դիմում եմ երաժշտութեան եւ գեղանկարչութեան օգնութեանը: Սրանք են գեղեցիկ որոնման ու հաստատման լաւատեսական սկիզբը:



ՌՈՒՇԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ





# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



**ՆԱԽԱԳԱՅ ԶՕՐ. ԷՍԻԼ ԼԱՅՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՊՏԵՄԲԵՐ 30-ՎՆԱՆԵԱՆԸ ԵՒ ԺԻՏՏՈՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**



Երիտասարդության և մարմնակրթության նախարար Սեպուհ Յովսեփյանը, Շաքաթ օր, իրեն ընկերակցող ժուրնի արարական ֆեդերատիվի մեկ պատուիրակության հետ այցելեց հանրապետության նախագահի գործարար Լախուտի:

Հանդիպումը առիթ մը եղալ քննարկելու Մոն Լա Սալի մեջ տեղի ունեցող 16 տարեկանից վարկրտներն ժուրնի արարական ախոյեանության կապուած հարցերը. մրցաշարքին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն արարական 16 երկիրներու մարզիկները:

Նախագահ Լախուտ հանդիպումին աւարտին յաջողութիւն մաղթեց պատուիրակութեան:

Ապա, ան արարական և Լիբանանի ժուրնի ֆեդերատիվներէն ստացաւ մրցումները խորհրդանշող յատուկ յուշանուէր մը:

### ՊԵՐԼԻՆԻ ՄԱՐԱԹՈՆ

### ՓՕԼ ԹԵՐԿԱԹ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ ՄԸ ՀԱՍՏԱՏԵՑ

Պերլինի մարաթոնին, որ տեղի ունեցաւ երէկ, քենիացի Փօլ Թերկաթ յաջողեցաւ ոչ թէ միայն տիրանալ տիտղոսին, այլ՝ աշխարհի նոր մրցանիշ մը հաստատել, արձանագրելով՝ 2 ժամ 4 վայրկեան եւ 55 երկվայրկեան արդիւնք մը: Անոր ազգակիցներ Սէմի Քորիթ եւ Թիթիւս Մունի յաջորդաբար գրաւեցին երկրորդ եւ երրորդ դիրքերը: Սէմի ժամանման գիծ հասաւ արձանագրելով՝ 2 ժամ 04' 56" արդիւնք մը, իսկ Թիթիւս՝ 2 ժամ 06' 15":

34 տարեկան Թերկաթ այսպիսով բարելաւեց ամերիկացի իսալեա խանուշիի (ծնունդով՝ մարտոնի) հաստատած աշխարհի մրցանիշը, որ հաստատուած էր անցեալ տարի Լոնտոնի մարաթոնին (2 ժամ 05' 38"):

Տիտղոսին տիրացած ըլլալուն համար Թերկաթ շահեցաւ նաեւ երեսուն հազար եւրօ, մինչ յաւելեալ յիսուն հազար եւրօ ալ գանձեց աշխարհի նոր մրցանիշ մը հաստատած ըլլալուն համար:

Աղջկանց մարաթոնը շահեցաւ ճափոնցի Եասուրօ Հաշիմոթօ, որ արձանագրեց 2 ժամ 26' 32" արդիւնք մը: Երկրորդ դիրքը գրաւեց քենիացի Էմիլի Քիմուրիս (2 ժամ 28' 18"), իսկ երրորդ դիրքը՝ իտալացի Օրնելլա Ֆերարա (2 ժամ 28' 28"):

Նշենք, թէ յաջորդաբար չորրորդ տարին ըլլալով, ճափոնցի այրիներ կը շահին այս մարաթոնը:

### ՎՈՒՆԵՐ

## ՈՌՊԵՐԹՈ ՇԵՐԱՍ ՏԻՐԱՅԱՒ ՏԻՏՂՈՍԻՆ

Սպանիոյ հեծելաբշարի շրջավազքին (Վուելթա) 21րդ եւ վերջին հանգրուանը, որ տեղի ունեցաւ երէկ Մատրիտի մէջ (148,5 քմ.), վերջ գտաւ իտալացի Ալեսանտրօ Փեթաքիի (Ֆասսա Պորթոլօ) յաղթանակով, որ ժամանման գիծ հասաւ արձանագրելով՝ 3 ժամ 51 վայրկեան եւ 19 երկվայրկեան արդիւնք մը: 2րդ դիրքը գրաւեց գերմանացի Էրիք Յապըլ, իսկ 3րդ դիրքը՝ սպանացի Տրէտ Ռոտրիկէս:

20րդ եւ նախավերջին հանգրուանը, որ տեղի ունեցաւ Ալթօ Տը Ապանթոսի մէջ եւ եղաւ ժամացոյցի դէմ մրցում մը (11 քմ.), գրեթէ որոշ չափով մը յստակացոյց տիտղոսին տիրացողին անունը, հակառակ անոր որ սպանացի Իստրօ Նոպալ բաւական երկար ժամանակ տեսն պահեց հեծելանորդներու ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը:

Եւ. Լու. Փոսթալի սպանացի հեծելանորդ՝ Ռոպերթօ Հերաս, որ 25' 08" արդիւնք մը արձանագրելով (20րդ հանգրուանին), գրաւեց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, 28"ի առաւելութեամբ գերազանցելով Նոպալը, երէկ եւս իր ունեցած այդ առաւելութիւնը պահելով անոր վրայ, տիրացաւ տիտղոսին՝ իր սապարէփին մէջ երկրորդ անգամ ըլլալով (նախկինը՝ 2000ին):

Գ Ե Ր Ա Ն Ա Ն Գ Ի սփրիւնքը Էրիք Յապըլ կէտերու դասաւորման մէջ գրաւեց առաջին դիրքը, մինչ լեոնային հանգրուաններուն մէջ առաջին դիրքը գրաւեց թոլոմպիացի Ֆելիքս Քարտենաս: Խուճբերու ընդհանուր դասաւորման մէջ Իպանեսօ հանդիսացաւ առաջին:



Շերաս Ստորեւ՝ հեծելանորդներուն վերջնական դասաւորումը:

- 1.- Ռոպերթօ Հերաս (Սպանիա) 69 ժամ 31' 52"
- 2.- Իստրօ Նոպալ (Սպանիա) 28" ուշ
- 3.- Ալեսանտրօ Վալվերտէ (Սպանիա) 2' 25" ուշ
- 4.- Իկոր Կոնպալէն Տը Կալտէանօ (Սպանիա) 3' 27" ուշ
- 5.- Ֆրանչիսքօ Մանսեպօ (Սպանիա) 4' 47" ուշ

ԿԵՏԵՐՈՒ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Էրիք Յապըլ (Գերմանիա)	181
2.- Ալեսանտրօ Վալվերտէ (Սպանիա)	161
3.- Ալեսանտրօ Փեթաքի (Իտալիա)	160
4.- Ֆելիքս Քարտենաս (Թոլոմպիա)	123
5.- Միքայէլ Ռասմիւսս (Գերմանիա)	99

ՆՈՒՄԵՐՈՒ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Իպանեսօ (Սպանիա)	208 ժամ 43' 05"
2.- ՕւՆՍԷ (Սպանիա)	1' 03" ուշ
3.- Քելմէ (Սպանիա)	17' 07" ուշ
4.- Քոֆիտիս (Ֆրանսա)	30' 22" ուշ
5.- Միքայէլ Փորթուգալ	37' 38" ուշ

ԼԵՆՆԵՐՈՒ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Ֆելիքս Քարտենաս (Թոլոմպիա)	204
2.- Ալթօ Օսա (Սպանիա)	112
3.- Ժոան Հորաշ (Սպանիա)	101
4.- Ալեսանտրօ Վալվերտէ (Սպանիա)	100
5.- Լուիս Փերէս (Սպանիա)	72

### ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» ԷՆ ԱՄԵՆ ԵՐԵՔՇԱՐԹԻ ԼՍԵՅԷՔ «ՏԵՍԱԿԵՏ» ՅԱՅՏԱԳԻՐԸ

Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին «ՏԵՍԱԿԵՏ» յայտագիրին միւթք է

### «ՇԱՅՐԵՆԻ ԵՒ ՍՓԻՌՔԱՇԱՅ ՊԱՐԱՐՈՒԵՍԸ»

Կը խօսին՝ ԳԱՐԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՏՐԵԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱԲԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեւողութեան հետաձայնեցէ «Վանայ Զայն»՝ 01-241199 եւ 01-267657 քիւերուն, ու տուեք ձեր կարծիքը:

### ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԻ

Աճանաչին բացառիկ շրջապտոյտ, գեղջուած գինով, դէպի Երևան եւ Ծաղկաձոր՝ 5-12 Եոկտեմբեր, Ա. կարգի պանդոկ, 5 օր Երևանի + 2 օր Ծաղկաձորի մէջ, լծան պտոյտներով, գին՝ 410\$: Թեյքը՝ Շալեպէն, իսկ Պէյրոնը՝ 550\$:

ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԻ, հեռ. 01-240654, 01-261177 եւ 03-233978:

### Հայ Կաթողիկէ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՄԱՐԱՆ



Ամենակարեւորը ԱՌԱՋԻՆ քայլերն են. ՎԵՐԵԼԸԸ անոնցմով կը սկսի

Պորժ Գամուտ, Արաքս փողոց, Գեո. 01/260504, Ֆաքս. 01/262955  
www.mesrobian.com

### ՃԱՏՐԱԿ ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Լիբանանի մէջ տեղի ունեցող Միջերկրականեան երկիրներու ճատրակի միջազգային մրցաշարքին, Բ. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ Շաքաթ օր, Քնարիկ եւ Սիւլան Մուրատեան քոյրերը յաջողաբար պարտութիւն կրեցին Եունմա Մախլոսէն (Լիբանան) եւ Անսաըր Պըրնիքէն (Սլովենիա): Երէկ տեղի ունեցան Գ. հանգրուանի մրցումները, որոնց ընթացքին Քնարիկ Մուրատեան յաղթեց Աֆամիա Միր Մահմուտի (Սուրիա), մինչ Սիւլան պարտուեցաւ Լինտա Պընսապըտ Ապիկէն (Ալճերիա): Այսօր տեղի կ'ունենան Դ. հանգրուանի մրցումները, որոնց ընթացքին Քնարիկ կը ճակատի Սիլվիա Քոլասի դէմ (Ֆրանսա), իսկ Սիւլան՝ Աֆամիա Միր Մահմուտի դէմ (Սուրիա):

### ՖՈՐՄԱՒԻԼԱ 1

### ՇՈՒՄԱԽԵՐ ԶԱՂԹԱԿԱՆ, ԲԱՅՑ ՈՉ ԱՆՈՅԵԱՆ



Շումախըր ուրախ՝ իր արձանագրած յաղթանակին համար

Ֆորմիլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 15րդ եւ նախավերջին կրան փրիին, որ տեղի ունեցաւ երէկ, Ինտիանափոլիսի մէջ (Մ. Ն.), հինգ անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած Ֆեռարիի գերմանացի վարորդ՝ Միքայէլ Շումախըր մեծ քայլ մը առաւ դէպի վեցերորդ տիտղոս, երբ երէկ շահեցաւ այս վազքուղին, արձանագրելով՝ 1 ժամ 33 վայրկեան եւ 35 երկվայրկեան արդիւնք մը:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, ան ընդհանուր դասաւորման մէջ տասը կէտի առաւելութիւն մը ունեցաւ Խոնտա Փապլօ Մոնթոյայի վրայ (որ նահանջեց երրորդ դիրք), իսկ ինը կէտի առաւելութիւն՝ Քիմի Ռայքոնընի վրայ:

Հակառակ անոր որ 34 տարեկան գերմանացին փոյ-փոպիշընի մրցումները սկսաւ 7րդ դիրքին վրայ, յաջողեցաւ գերազանցել իր բոլոր մրցակիցները, մինչ Մոնթոյայ, որ սկսաւ չորրորդ դիրքէն, երէկ հանդիսացաւ վեցերորդ:

2րդ լէփին Մոնթոյայ բախում ունենալով Ֆեռարիի երկրորդ վարորդ՝ Ռուպէնս Պարիքելլոյի հետ, պատճառ դարձաւ պրայիլիցիին, որ չկարենայ շարունակել կրան փրիին: Քոլոմպիացի տասը երկվայրկեանի պատիւ մը ստացաւ:

Վերջին հանգրուանի կրան փրիին որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ 12 Հոկտեմբերին, Սուլուրայի մէջ (Ճափոն) պիտի ըլլայ ճակատագրական, որովհետեւ հոն պիտի յստականայ ախոյեանին անունը:

Ստորեւ՝ վարորդներուն դասաւորումը.

- 1.- Միքայէլ Շումախըր (Ֆեռարի) Գերմանիա 92
- 2.- Քիմի Ռայքոնըն (Մաքլարըն) Ֆինլանտա 83
- 3.- Խ. Փապլօ Մոնթոյայ (Ուլի.) Քոլոմպիա 82

Ստորեւ՝ խումբերուն դասաւորումը.	ԿԵՏ
1.- Ֆեռարի	147
2.- Ուլիլիմս	144
3.- Մաքլարըն	128
4.- ՌեՆօ	84
5.- Սաուպըր	19
6.- ՊԱՐ	18
7.- Ժակուար	18
8.- Թոյոթա	14
9.- Ճորտըն	13

**Le Savoir-Faire en Lumière**

**G. AYANIAN & SONS**

Dora, (01)255222/3/4/5/6  
Gemmayez, (01)447000-445396  
(03)627728/9  
Fax: (01)265187-582357  
E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com

